

բակութեան ստանութեան հետեւանքները դէպի հայոց դարոցաց նիւթական ապահովութիւնը խրատաբար սիրելու ուսումնարանը և ամեն ջանք ի գործ դնել նորա ապահովութեան համար:

Պ. տեսուչ Արքայ Արարատեանի ուսումնական հաշուից տեղեկացանք որ ուսումնարանը ունի երեք պատրաստական և վեց հիմնական դաստուաններ մի քանիսը սոցանից ունին նա և զուգընթաց բաժիններ: Աշակերտութեան թիւը մօտ 300 է որոնցից 58՝ չբաւոր և յառաջագետ մ աշակերտութիւնը ձրի ուսումն են առնում թէ՛ ի հաշիւ ս. Գէորդ եկեղեցւոյ թէ՛ ի հաշիւ բարերարների և թէ՛ ի հաշիւ ուսումնարանի: Այս տարի աւարտել են իւրեանց ուսման ընթացքը վեցերորդ դասարանից տ ա ո ն և մի յառաջագետ աշակերտութիւնը որոնք ստացան աւարտման վկայագրեր և մի մի փառակազմ Աւետարան:

Պ. զանապահ Աղէքսանդր Քրիշտիանի տնտեսական հաշուից տեղեկացանք որ 1883—4 ուս. տ. ընթացքում մուտք եղել է 12117 ու. 66 կօպ. իսկ ծախք է եղել 13604 ու. 61 կօպ.: Աւերմն ուսումնարանը քիսա ունեցել 1486 ուսուցիչ 94 կօպէկ:

Ուսումնարանի դրամագրութիւնը աւելացել է հետեւեալ նուէրներով: Այրի Աննա Տէր-Ստեփաննոսեանը ըստ բանաւոր կորագրութեան հանգուցեալ ամուսնոյ իւրոյ Յակոբւբայ Տէր-Ստեփաննոսեան նուիրել է մի հազար ուսուցիչի և հանգուցեալ Թշկապետ Յովհաննէս Մարկոսեանը կտակել է չ որ ս հ ա տ խաղարկութեան տոմսակ:

Այդ նուէրներով ուսումնարանի դրամագրութիւնը հասել է 27825 ուսուցիչ:

Ին զուամբի որից 14800 ուսուցիչ վարչութեան խնայածն է, իսկ 13025 ուսուցիչն նուիրում են այլ և այլ անձինք:

Բացի այս զուամբից ուսումնարանին պատկանում է նա և 5500 ուսուցիչ զուամբ հանգուցեալ Սողոմոն Պապէի կտակից միայն այդ զուամբը ըստ կարգադրութեան հոգեւոր իշխանութեան պահպանել տեղոյ կոնստորիայում որ վնարում է նորա տոկոսը:

Ուսումնարանը ստանալիք ունի.

- 1) Մողնայ ս. Գէորդ եկեղեցւոց ուսումնարանին յատկացեալ չորս տարուայ նպաստը 1600 ու.
- 2) Հանգուցեալ իշխանուհի Նատալիա Թումանյանի կտակակատարներից համաձայն հանգուցիւււոյ կտակի 1000 ու.
- 3) Հանգուցեալ Աննա խանում Տէր-Ղազարեանի ժառանգներից համաձայն բանաւոր կորագրութեան 1000 ու.
- 4) Գորիքեանի խիթարեաններից համաձայն յայտարարութեան արժ. Ստեփաննոս աւագ քահանայի Տէր-Ստեփաննոսեան 500 ու.
- 5) Հանգուցեալ Թիֆլիսի քաղաքացի Մուրադեանի ամուսնուց համաձայն կտակի 200 ու.

Ընդ առնելը 4300 ու.

Այս հաշիւներից յետոյ Գեր. Սերբազան Աւաջնորդը «Պահպանիչ» ասելով օրհնեց հանդիսականներին և սորանով վերջացաւ հանդէսը:

Թիֆլիս, 24 սեպտեմբերի. 1884 ամի.

ՀԱՐԿԱՌԻ Է ՀԱՇԻՒՍԱՆ

1882 թ. վերջերում տեղիս մի խումբ հայ երիտասարդաց մէջ ծագել էր մի շատ համակրելի միտք այն է հիմնել Բագու քաղաքում մի արհեստասիրաց ընկերութիւն որը միջոց տայ աղքատ դասակարգին իրանց որդիներն արհեստ սովորացնելու: Պէտք է խոստովանուած որ այդ բարենպաստ գործի սկզբնապատճառը իսկապէս եղել է պ. Սարգիսեանը: Հետզհետէ այդ համակրելի միտքը արձագանք գտաւ տեղիս երիտասարդաց մէջ: Առաջին ժողովում որ տեղի ունեցաւ պ. Հայրապետ Քալանթարեանի սանը կային ժողովի նախագահ նորընծայ հայր Գրիգոր Գրիգորեանից հետոն և բազմաթիւ երիտասարդներ որոնց իւրաքանչիւրը հրաւիրուած էր առանձին տոմսակներով: Այստեղ խորհրդին խօսեցին վեճեցին և վերջապէս հասան այն եզրակացութեան որ նախապէս հարկաւոր է ընտրել ներկայ երիտասարդներից «մասնաժողով» որ բաղկացած լինի ութ մարդկանցից որպէս զի այդ վերջինները ձեռնամուխ լինին մի կանոնադրութիւն հեղինակելու սպառնալ ընկերութեան համար: Այնուհետեւ երբ արդէն կանոնադրութիւնը բարձրագոյն իշխանութիւնից կը հաստատուի վերստին կը լինի մի ընդհանուր ժողով որտեղ կ'ընտրուին խորհուրդի նախագահ զանապահ ատենադպիր անդամներ և այլն:

Յիշեալ գիշերը ընտրուեցին որպէս հեղինակներ ապագայ կանոնադրութիւնը մշակելու համար հետեւեալ պարոնայք. Աղէքսանդր Մովսէսեան, Աղեքսանդր Նաջարեան, Արեւ Ապրեան, Սէիպ Ամիրեան, Աղէքսանդր Արեւեան, Գարեգին Տէր-

Աւետիքեան և Սմբատ Սարգիսեան: Երբ արդէն ընտրուեցին սրբաշարժ մտքով և ընդհանուր նուր ուրախութեամբ: Այստեղ պարզեմ համարում դուրս բերել ներկայ տարուայ «Մեղուի» 66 համարի մէջ լոյս տեսած, պ. խումբ խորի առաջնորդ յօդուածի հետեւեալ կտորը. «Ամեն գործ եռանդով կ'սկսենք և մինչև իսկ ծայրահեղ չափազանցութեամբ. և յանկարծ որ և է խոչընդոտի հանդիպելով կամ դուրս ոչ թէ գործը գործի համար սիրելով այլ միայն իբրև նորութեան անձնատուր գործունէնք մի քանի ժամանակ յետոյ լինում և ընկղմում ենք անգործունէութեան մէջ: Մեր գործիչները կարծես մեծ մասամբ ձեռնամուխ են լինում գործին միայն անախառնութեան համար և ոչ իսկապէս գործին ծառայելու համար»:

Բայց ես կ'անեմ որ «Մեղուի» յարգելի խմբագրի ասածներից էլ առաւել եռանդով էինք սխալ գործը անգամ նիստ էինք ունենում: Մեզ համար յորդահոս անձրեւը ձմեռն ձիւնը և վերջապէս սաստիկ հողմը ոչինչ նշանակութիւն չ'ունեն որ տեղ էինք և կատարում էինք ամենայն ճշտութեամբ: Ազդել երկու շաբաթուայ ընթացքում ութ հոգի համբարշտաբար հեղինակեցինք մի ընդարձակ կանոնադրութիւն մտաւորապէս 45 յօդուածներից բաղկացած: Մտում էր մեզ միայն ընդհանուր ժողովից մեր հեղինակած կանոնադրութիւնը համակրութիւն ստանալուց յետոյ առաջարկել այն բարձրագոյն իշխանութեան հաստատութեանը: Չը մոռանամ ասել որ մինչև մասնաժողովի կանոնադրու-

թիւն հեղինակելը նորածին ընկերութիւնն ունէր մտաւորապէս որպէս զբանաղուխ 60 ու. որը յանձնուած էր ընկերութեան հիմնադիր պ. Սարգիսեանին: Ահա իմ խնայած տեղեկութիւնները մինչև այժմ այդ ընկերութեան վարարքում:

Սակայն անցաւ մի ամբողջ տարի շուտով և կ'անցնի երկրորդը բայց ես և զուցէ ինձ հետ շատերը մինչև օրս էլ չը գիտենք փողերի ուր լինելը: ձիւն մի այդպիսի բնկերութեան վերաբերմամբ 1883 թ. «Մեղուի» 78 համարում հետեւեալ խորհրդածութիւնն կար. «Եւրաքանչիւր ընկերութիւն հասարակական հիմնարկութիւն է, իրաւարանական անձն է. ուրիմն հասարակութեան ամեն մի անդամ ունի իրաւունք իւր կարծիքը յայտնելու ընկերութեան քանձի գործադրութեան մասին: Եթէ հիմնադիր անդամները լուրջ են նրանք իմ կարծիքով պարտազանցութիւն են անում: Նրամանապէս պարտազանցութիւն է գործում և մեր լրագրութիւնը որ այդպիսի հարցերում լուրջ է: Բանը գուժարի քանակութիւնումը չէ այլ ինքը սկզբունքն է զիտարբանը: Մեզանում վերջին ժամանակներս շատ զանազան նպատակներով գուժարներ են ժողովում և ոչ ոք երբէք չէ ուզում հաշիւ տալ ձաշիւ պահանջները միշտ անբաւականութեան անձնական վեճի և բանակուել պատճառ է դառնում»:

«Մեղուի» յօդուածագիրը շատ արդարացի կերպով է նկատում: Այս մեզանում մի ժամանակ մօզա էր դառել փող ժողովելու իրաւ մեր խեղճ բողոքարեակ հասարակութեան գիտին ինչպիսի ոյինների չեն խաղայիլ զանազան բաղ-

- «Ստանաբարձ սուանի, Սախլ ասում խուղա սանի, Իրի էօփիւմ, բիր զիլիւմ, Ծիրին յի խուղա սանի»:
- «Աղիզըմ սուղա մաղաթ, Բալըղամ սուղա մաղաթ, Չրաղ եանդր գեօղալըմ, Ղարխ էօղըում սուղա մաղաթ»:
- Եթիւմ, բաս որ դու խաղ սանիւմն ես զոչաղ, Արկարը չու ածիւումը, է-կէք էք էրկուտը բաս մտէք, ամեքը 10—10 բունգըլ ասէք, ով որ կպտուի նա զնա գող մեր աղջկերանց ջան-գիւղումի, միայն թէ ես կլիմ քու հնգերը, Ասասուրը, Գիքօն էլ Արկարի:
- Չիմն էլ դարուլ Կացան Սիսօի էս խօսքերին.— Եթիւմ ու Արկարը բաս մնան.
- Եթիւմ.
- 1) Ին ինչն ա ինչ.— Ուլանոց ուլ պտանոց, Ուլանը էկան կարմրակտուց.
- 2) Ին ինչն ա ինչ.— Սև ստանեն սարն էլաւ, Անհամարքը վերբերաւ:
- 3) Ին ինչն ա ինչ.— Կարմիր պուլիկ, Սև սերիկ.
- 4) Ին ինչն ա ինչ.— Թուրք տղէն վազի-վազ, Գօտիկ ունի 100 գազ.
- 5) Ին ինչն ա ինչ.— Համաձայն.

- Գումէլը գօլումը, Պոչը չօլումը.
- 6) Ին ինչն ա ինչ.— Անուր ջաղաց, Անկրակ բաղած.
- 7) Ին ինչն ա ինչ.— Պապը սարումը, Ոսնիքը կրակումը.
- 8) Ին ինչն ա ինչ.— Իրկու սնանի, Մի անանի.
- 9) Ին ինչն ա ինչ.— Բամին էկաւ չով բերեց, Եղը ճնեց կով բերեց.
- 10) Ին ինչն ա ինչ.— Ալ եղը պալ եզը, Բանի բարձեմ տար եզը.
- Էս սնաթին քու ամեն մի բունգըլ բաց անեմ.
- 1. բունգըլ նուին ա. 2-ը ամիլն ու մազերը. 3-ը մասուրը. 4-ը վիլալարը. 5-ը չերեփը. 6-ը մեղրի հացը. 7-ը փուքսը 8-ը քինթը. 9-ը Աղամն ու Լէն. 10-ը Եթիւմ ջան, գղալն ա. Գէհ... հմի անգաճ արան, հերթը իմն ա, ասաւ Արկարը ու էսպէս սկսեց.
- 1) Ին ինչն ա ինչ.— Գնում գնում իզ չունի, Եօրղա գնում թոզ չունի, Հեր չունի, մէր ունի.
- 2) Ին ինչն ա ինչ.— Ղուչա, Ինչ զուչա, Պօզերը փալա զուչ ա

- Ոչխարի պէս խոտ կրածի, Ջրի համը հուի-հուի տեսած չի
- 3) Ին ինչն ա ինչ.— Մի կով ունիմ հանդի ա, Իսպահանայ հանդի ա, Տարէնը մի հետ կիթ կը գայ, Դեռ հլա հանդի ա.
- 4) Ին ինչն ա ինչ.— Անդեղ կարմրած ա, Անդանակ կտրտած ա.
- 5) Ին ինչն ա ինչ.— Անգերան շինած ա, Անսին կաղնած ա.
- 6) Ին ինչն ա ինչ.— Էրգեն աղիք, Մերը ծաղիկ.
- 7) Ին ինչն ա ինչ.— Ըտեղից հիւլ Ըրեան, Մանդր-մանդր քերդան.
- 8) Ին ինչն ա ինչ.— Ալալա բալալա, Տար, հաղ արան, Ին խաղ արան.
- 9) Ին ինչն ա ինչ.— Ըտի պուպուզ, Ընդի պուպուզ, Բանի պուպուզ.
- 10) Ին ինչն ա ինչ.— Էս կուռը սար ա, սարի, Էս կուռը կով ա, կով չի, Չու ամի, հաւ չի, Կըթի կով չի.
- Արկար ջան, քու բունգըլների 9-ը

բաց կանեմ. վրա 10-ը կարալ չեմ, ասաւ Եթիւմ ծօրծօրանքը քորելով. — Մեր տղայ, դժար տեղը ա չոր գալի—հն, բան չի կայ, որը գիտես բաց արա, որն էլ գիտես ոչ—Արկարին մի գեղ կը տանք ինքը բաց կանէ, ասաւ Սիսօն. Եթիւմ սկսեց Արկարի բունգըլները բաց անել. Եթիւմ. 1 բունգըլ մեղրածանն ա, 2-ը արբնումի ճիւղն ա, 3-ը բալը, 4-ը հաւի կտտարը, 5-ը երկակամարը, 6-ը մեճ պասն ու գատիկը, 7-ը Ձիւ ոտնատեղը, 8-ը սաղը, 9-ը սօլէն, վրա տանն էլ դու բաց արան, Արկար, Չալալ-Օղլին քի եմ տուել. Արկարը մ'քիչ կանատակերից փքուեց, որ Եթիւմի պէս ամեն բան գիտեցողին կապեց, էսպէս ուրախ ուրախ բաց արաւ իրան ասած բունգըլը: «Ուտեմ խմում քու Չալալ-Օղլին, «Հալեմ-մաչեմ քու Չալալ-Օղլին, «Իրգուտ տրեխ անեմ մանգամ Չալալ-Օղլին, «Էլ չես ստել իմ բունգըլ—հայելին ա, Հմիկենց ետը դուք գիտէք Եթիւմ ու Սիսօնի ինչ զուչադութիւն կը բնացնիք, ձէն սովին մեր տղերքը ու վիկացան քաշվեցին դա իրանց դագենին. X Իսանի անգաճնին խաղանոց լալ-վալալ քամին կամանց կամանց երգեցին

վրի սև ամբերը տաղթմիչ էր անում. Լիսակը երգեցի կէս տեղը կարճած, բազի վախտ ամբերի տակն էր մանում —Թագ կնտում, էլ էր զուս գալի ծիկ-բակում, իր շիկը Գժար ուրթի վրա գձում. Էս կէս քերին էրկու հողի վեր էլած տաւարնու տաղեքում չօքի-չօքի, կուգի-կուգ մանին գալիս, էլ էր գող կատուի նման մարդ մտնում, աչքներուն պլլ-զաջնում. — Էս անդէր լիսակն էլ մեր բաղտիցը, հէնց երգեցի կէս տեղն ու պուզ-զել, մեխվել.— արա թէ մի անդէր կորած-մորած ամբ, գայ ունին ընգնի, քիչից կամանց ձէնով նրանցից մինն Դա Եթիւն էր. — Էր էլ մեր բաղիցն ա, զու տես թէ բան չի կարենանք անիլ, մտիկ է-գուց ոնց են աղջիկերը միտարա գձում մեղ, ծիծաղատեղ չինում, ջուրայ տը-վուց Եթիւմին միւտը. դա էլ Սիսօն էր. — Գիտես ինչ ա, Սիսօ, ես ոնց որ բրաւուրդ եմ անում—հնչեկէն. Էլ մեզ հետ կնիկ-արմատի մատը խառը չի ըլլի, մեք բան չենք կարալ զուլիս դուս տանիլ: Թաքօն օյնաղ աղջիկ ա, ով գիղէ չէ հմի էլ զարթուն ըլլի արի դու գնա Ֆօրթարած թուրքի կնայ կուչտը, մեր հալը հալկացրու, դանչանք արան, որ բալըի գայ թաքօր ձաղը դուիցը եր անի, տանի հեռացնէ ու գնա Թաքօն ասի՝ «Գէն գոմիդ ձաղը դագենու ներ-

1) Մինչև.

դասինդիր « պարոններ »: Ինչպիսի շօշափելի դուամբներ չեն դուրս պրծեցէ մեր առատածեռն ժողովուրդի գրգռանքը և ո՞ր են գնացել այս սօր ինքն էլ չը գիտէ որովհետեւ հաշու չէ ստացել որ և ինչ պարբերական թերթի մէջ և եթէ մի օր հարկ եղաւ հաշու պահանջելու այն ժամանակ նա շնորհակալութիւն ստանալու փոխանակ պիտի անուանուի յուշայլ դուածան մասնիչ և այլն: Եւ ահա այդ է պատճառը որ այսօր Բաղուայ հայ ժողովուրդը իւր սնցեալ դառն սխալը աչքի առջ ունենալով խորշում է ամեն տեսակ հասարակական բարերարատակ գործերին: Պատճառը շատ պարզ է որովհետեւ զայն են ժողովուրդի վերջին կայելները խորշում հաշու չեն ներկայացնում: Ենթադրեալ արդէն գիտենք որ վերջինջեալ ընկերութիւնը ներկայումս գոյութիւն չ'ունի որովհետեւ հաստատուած չէ ուրեմն երբ մի ընկերութիւն հաստատուած չէ նա արդէն կենդանի էլ չէ և հետեւապէս չէ կարող ունենալ ոչ նախագահ ոչ գանձապահ և ոչ էլ անդամներ: Արեւմտեան ընկերութեան շնորհակալ հիմնադրութիւնը յատկապէս այդ դուամբը մի օր և ինչ բարեգործական նպատակի և կամ ուղղակի վերադարձնել իրանց նուիրատու պարոններին: Այնուամենայնիւ պէտք է չը մտաւնայ որ հաշու տար մամուլին և հայ հասարակութեանը անշուշտ հարկաւոր է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Երեք կայսրների տեսակցութիւնը Ակերնի վիցում լրագրորդներն նորանոր նիւթեր տուէր և ամենքն էլ սկսան գուշակութիւնը անել: Ոմանք այդ տեսակցութեան նպատակ դրին սերտ դաշնակցութիւն երեք մեծ տէրութեանց, ՅԵՐԱՍՏՈՒՄԻ դէմ, որի համար ոչ մի պատճառ չը կայ հանդէսում, քանի որ նա ամենից աւելի խաղաղութեան կարօտ է և ցանկանում այն պահպանել Եւրոպայում, աւելի պարագած լինելով արտաքույ սորոս: Տաճկի պաշտօնական լրագրորդներն այդ տեսակցութեան մէջ տեսնում են դաշնակցութեան ցանկութիւնը ընդդէմ Անգլիայի, բայց դժուար թէ այդ ես իրաւացի լինի, քանի որ Անգլիայի և երեք կայսրութեանց արքունեաց յարաբերութիւնը բարեկամական են և հազիւ թէ երեք կայսրութիւնը պատրաստակամութիւն յայտնեն պաշտպանելու Տաճկաստանի շահերը Անգլիայի դէմ թէ և Տաճկաստանի մամուլը ուրախ է յայտնելու թէ երեք կայսրների տեսակցութիւնը Անգլիայի դէմ է, կան նաև այլ զանազան կարծիքներ յայտնողներ:

«ՈՐՈՃ» լրագիրը, որ մի տեսակ «ուսու պաշտօնական թերթ է համարվում, այս տեսակցութեան նուիրում է երկար յօդուած, որ վերջացում է հետեւեալ խօսքերով «Միջազգային խաղաղութիւնը Ակերնի վիցում սրբագործվեցաւ բարձրագոյն իշխանութեամբ»: Այս կարծիքն աւելի հաւանական է, որ երեք մեծ տէրութեանց իշխանների տեսակցութեան նպատակը լինի Եւրոպայի խաղաղութիւնը պահպանել և տէրութեանց ներքին ապահովութիւնն անխախտ պահել անիշխանականների, սօցիալականների և ոչընչականների ձգտումների դէմ, փոխադարձ օգնութեամբ: Տարակոյս չը կայ, որ տէրութեանց Պետերի գլխաւոր նպատակը կը լինի նախ ներքին և արտաքին ապահովութիւնը իրանց պետութեանց և ապա արտաքին հարցերը: Բայց ներկայումս ամեն տէրութիւնը մեծ կարողութիւն ունեն իրանց ներքին

ապահովութեան և բարեփոխման համար:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«МОСКОВС. ВѢД.» լրագիրը հաղորդում է, որ կովկասի զլխաւոր կառավարիչը միջնորդում է աւազիկայ 1885 թուականին հեռագրական դժբերով կապելու Լենկորանը Աստարայի հետ, Իզգիլը Ամարասի (Միխայելովսկայա) հետ, Սարբկամիչը Կարակուրտի հետ և Չուրան Որդուրտի հետ:

Վանէն «Արեւելք» գրում են.— «Վիմանայթ թէ հանրաձայնօք Ազա Մկրտիչ Սանատարեանց՝ կամարական պէյի միջոցաւ առաջարկած է «Սանդխտեան» ընկերութեան 10,000 ռուպլ տալ, եթէ ընկերութիւնը յանձն առնու փոխել զարդի անունը և իւր հանդուցեալ մօր անունովը կոչել զայն «Մարիամեան» վարժարան: Կ'իմաստք որ ընկերութեան Գործ. ժողովն արդէն համաձայնած է և թէ կամարական պէյ այսօր Պ. Սանատարեանին պիտի իմացնէ այս համաձայնութիւնը: Երջանէս կ'իմանաւ որ միայն կայ նա և առաջարկելու Պ. Սանատարեանին որ «Սանդխտեան» վարժարանը կարոյ Սանատարեան վարժարանին նման ուղղակի իւր նկրդութեան ներքև առնու, զի ընկերութիւնն արդէն կազմաւորուած է, և դպրոցն որոյ վարժարանը քանի մը անձանց մենաշնորհը դարձած է այժմ, կը գտնուի այնպիսի անձի մը տեսչութեան ներքև, որոյ միակ արժանաւորութիւնն այն է որ զըզրոցին և Գործ. ժողովոյ անդամներն զանկերուն պարտք ունի, զոր ուրիշ կերպով չեն յաջողած ստանալ, և այն, պատճառաւ պահանջը ստանալու այս տարօրինակ միջոցին դիմած են. Պ. Սանատարեան մեծ բարեք ըրած կը լինի «Սանդխտեան» վարժարանի, եթէ զայն նիւթական անկումի հետ բարոյական անկումէ ալ բարձրացնելով, ազատէ զայն քանի մ'անձանց մենաշնորհութեան»:

Գրաֆ Բորրինսկին վրացերէնից թարգմանել է Քրանտերէն լեզուով վրաց յայտնի Ռուս-Թուրքի «Վեփիվիւ-Տղասանի» (վարդի մորթի) բանաստեղծութիւնը:

Տպարանատէր պ. Մարտիրոսեանցը մեզ խնդրում է յայտնել, որ իւր տպարանը փոխադրուած է գէշերալ Օղլորթիօյի տանը, մի և նոյն Օրբելեանով փողոցի վրայ:

Ցաօք կը տեղեկանաւր թէ Ամեն. Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակն օր աւուր ծանր կերպարանք մը կ'առնու: Երեկ վարձու Բժշկական խորհրդակցութիւն մը կատարեցին Տօքթ. Միւսթեք, Փէշտիմաճեան Էֆէնտի և Աղասեան Մանուկ պէյ:

Երեք զիշկեր է վեր ամենին չէ քնացած Ն. Սրբազնութիւնը, հնչուութիւնը գըրեթէ արգիւտած է և անդադար իւրելով կը չիկն ձեռնարկ և մարմինը:

(Արեւելք):

Ազգային վարչութեան խառն ժողովն անցեալները յանձնաժողով մի կազմեց և պաշտօն տուաւ նա՛մ՝ քննել և տեղեկագրել թէ վանքերը դարձեալ ըստ առաջնոյն տաւաղութեանց հետ միացնել օգտակար է, և թէ՛ ինչ կարգաբարձութիւններ ընել պէտք է միացման համար: Արդ՝ կը լսեմք թէ յանձնաժողովը իւր պաշտօնը լրացնելով տեղեկագիր մատուցած է, և վանքերն առաջնորդութեանց հետ միացնելու օգտակար կը համարի թէ ժողովրդեան, թէ վանքերից և թէ առաջնորդարանաց համար:

(Արեւելք):

Թիֆլիսի Երազէն եկեղեցւոյ ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանն կիրակի վարագայ սուրբ Խաչի տօնին, սեպտեմբեր ամսոյ 30, առաւօտեան 10 ժամին, կատարելու է Երազէն ս. Աստուածածնայ եկեղեցւոյ իւր նուիրատուների հոգեհանգիստը: Խնդրում է ուսումնարանի վարչութիւնը աչակերտուհեաց ծնողներին պատուել իւրեանց ներ-

կայութեամբ արժանաչապատկ հանգուցեալ բարերարներին:

«Վոյկասի Հայոց Բարեգ. ընկերութեան» խորհուրդը յայտնում է ի գիտութիւն հայ ուսանողների և աչակերտների, որ ընկերութեան թոշակաւորների թիւը լրացած գոյով, թոշակաւորութեան համար խնդրք այլ ևս չեն ընդունուիլ:

«Գրօէթայի» սանկով ընթերցանութեան գրքերի տպագրութիւնը, բաւական առաջ է գնացել: Այս տարի միայն մինչև առաջիկայ յունվարի մէկը կը տպագրուի մօտ 30 գիրք: Այս երկուցը պարզ կերպով ցոյց է տալիս և ամենքը կը համոզուին, որ ընթերցանութեան գրքերը շատ են տարածվում վրաց ժողովրդի մէջ, մանաւանդ եթէ ներկայ տարին համեմատելու լինենք անցեալ տարին: Գիտ, երբ 3-4 գիրք հազիւ էր լոյս տեսնում, այն էլ մեծ դժուարութեամբ:

Ամասիոյ գաւառական ընդհանուր ժողովը խնդրել է Պատրիարքարանէն, որ Ամասիոյ առաջնորդական վիճակը թողալի առաջնորդական վիճակին հետ միանայ, և այս երկու վիճակաց առաջնորդութեան պաշտօնն յաճուի Այսահեան Գեոր. Տ. Ներսէս Գ. վարդապետի, որ թողալի առաջնորդ է այժմ:

(Արեւելք):

«Գրօէթայեան» շատ անգամ իրաւացի կերպով նկատել է և այժմ էլ նոյնը կրկնում է, որ անարդարութիւն է և մինչև անգամ վնասակար Թիֆլիզի ժողովրդի համար այն օրէնքը, որով լատտերի տէրերը պարտաւորվում են հաւասար մասը վճարել ինչպէս յիմութեան զերանների այնպէս էլ հասարակ՝ այրելու լատտերի համար:

Վ. Ամիրան.

Բազու, 12 սեպտեմբերի:

Քի կուսն ա, գնա թի թէ չէ զիւրոց կլի: Թաքօն ձագին գնա թէ չէ ես ու դու դագնու և զի կուսովը պատ կը տանք, կը գնանք չեղը վեր կը քաշենք նի կը մտնուք ես ջանգիւլումի պուլիկը կը վախցնենք, ես թխուածքի բոխչէն: Աստուած արել ա Թաքօի մերն էլ խուլ ա, գատ չի իմանալ:

Ասած ա, բերթը միջնը կը կտորուի: Էս թավուր տղերանց խօսքը ո՞վ գետիկը կը գձէր. թուրք չէ, որ նասրադին էլ նրանց խաթրը չէր կտորիլ, հինգ րոպէ չը քաշեց, Քօրթարածի կնգայ ձեռքով ամեն բան գրուի եկած էր.— որ դի որ էր հուզուրում մի եքայ սև ամբ էլ կկա լինանի ըռէիւր կայաւ, էլ ուղ չէլաւ:

— Տղայ, ասած ա, գողը ինչ կը սիրէ — միջնաքեր. հմի մերն ա, դէ ինչ հունար ունեն բանագրու:

Միտիբ էս ասելն էլաւ Եթիմը չեղի տակովը գողէն սլորուիլը և մի եքայ, հայվարայ բոխչի դուս քաշին ու իրանց դրա Աչքու-հանքայ ձորը տալը մէկ ելաւ:

XI

Նոր դուս էր էկել արեւ սարի ձեւին, երբ Գժարուրթի ջահիլ ու արիլ չիմն էլ գուքուած ու կոկուած հաւաքուցան Միհրաբանց ու Իսպիւրանց ըլալուցնու արանքը ջանգիւլում հանե-

1) Ե՛ծ ու փոքր:

լու: Գաւթանց Չալի չ հարսը, որ ուրթի խաթուրը էր թէ իր գովողը և թէ զվարովը, իսպիւրանց Քալին, որ ջահիլն ու չիմուս պուճուրն էր, դեռ չէր իմա նում աչխարձիս շաւն ու խնրը, կարմիր շաղրամով քօղրած բերուց նստացրուց չիմուս մէջ տեղը, ջանգիւլումի պուլիկը տվուց ձեռը և ինքը էս ջանգիւլումը վեր քաշեց:

«Վարի թրթնջուկը թազա, Չալի ու միտակ քեզ մազա, ինձ պէս նազանի աղջիկը, Քեզ պէս տղին ոնց սազա»:

Քալին ձեռը պուլիկը տարաւ մի մատնոց հանեց տվուց իր տիրոնչը, Չատի-հարսից եղը Թաքօն ասաւ:

«Այ, աղայ, գու հեր ես մեր ես, Ո՛ր է կար էս կէս գիշերիս, Տեղումս քեզ տեղ չը կայ, Գրուիդ դիր կուսերիս»:

Թաքօի էս ջանգիւլումի վերա հվարուած խալիլի մէջ մի փրթկոց ընդաւ, չուճի պուլիկից նշանը չէնց իրանք՝ Թաքօինը դուս էկաւ:

— Ապրիս, Թաքօ, ապրիս, էրեւոյ պարզ կենայ, լաւ տեղ ես քնացնում, ձեռն վան կար մի ջաղայ, ձեռն տուին նրա թայգաչ աղջկերը:

Չիմն էլ ներթով մի-մի ջանգիւլում ասին, ամեն մի ասելու վրա Քալին պուլիկից մի-մի նշան հանում էր տիրոնչը տալիս:

2) Ասում են՝ առանց օգնականի ե-զան վիզը օլորում էր վայր ձգում:

Հերթը հասաւ Աստուճարին, որը էս ասաւ:

«Ախպեր, ախպեր, ջան ախպեր, կարդացող ջանիդ մեռնեմ, Ընկերանց մէջ թաւալան ախպեր, Սաղմուսիդ ծալին մեռնեմ»:

Էս ջանգիւլումի վրա կ'իմի նշանը դուս էկաւ, որ գլխներուն եսուուի պէս կաղնած ձանգիւլ էր պահում, հէնց որ իմացաւ իր քվոր ասածը իր վրա սազած ու կտրած ա, ուրախացած ձէն տվուց:

— Չատի հարսի, տղերքս տվարի կուսն ենք գնում, թողէք մի բան էլ ես ասեմ:

Չիմն էլ գիդէին որ մասնարութիւն պտի սնիլ Եթիմը, համա խաթրիցը չէլան, իրաւունք տուին, որ նա էլ իր սրտինը ասէ. Եթիմը իրաւունք ստացաւ ու էս ասաւ:

«Գիւրում-գիւրում, էս պաս, Ղաչխայ քուռակ էս տակս, Չիզի հարսը քամակս, Միղրով գաթէն աղաքս, Նի ըլեմ գնամ չնկան, Զնեվան կար մի ջաղայ, Միջին կար մի կտորած, Լինքը քաշեց կոճերս աղաք, Չալ—չալ կովերս ինչ էլան, Արկի տակին գու՛մ էլան, կովկիթս գրի կրակին, Գունայ գրի պուտին, Վայ իմ գալում ախպերակին»:

Վազ տայ ինչ քուռակին»:

Ասաւ պրծաւ Եթիմն, Միսօին ձեռնարունակ արած մէկիւ տղերանց հետ գընացին աղջկերանցից խելիմ հեռու նըստոտեցին: Աղջկերը ջանգիւլումից եղը պուլիկ ջուրը դաչի թասը ամին, չիմուս համար էլ պոխտ տուին, ամեն բանից պրծան—մի հազրուեցան գաթայ—նազուրը անոջ անկու: Մի քանի աղջկերք ուրախ ուրախ ծիծաղելով Թաքօի հետ վազ տուին թխուածքի բոխչէն բերելու, համա ո՞ր ա բոխչայ, նրա ողն ու թողը չը կայ:

— Վայ գլխիս, էս ինչ օղբաթ ա, ասաւ Թաքօն, երբ հաւաքսի կօթի խուր վեր քաշեց, տեհաւ մէջը չը կայ և թուրը բերնումը ցամաքած մնացել էր կաղնած, մէկ էլ աղջկերքն էլ լեզուներուն կապ ընգած մնացել ին Թաքօի էրեւին պեղացած կաղնած:

— Ախի, ինչ էք փետացել կաղնել, գիդէք ոչ ու՛մ բանը կլի, ասաւ Նաթէլը ու ըրու էլաւ ծիծաղելով դրա տղէրանց վրա: Ասած ա, փետը որ վեր ունիս շունը կ'իմանայ, մեր աղբերը էս սնաթին իմացան թէ ընչի ա դալի Նաթէլը իրանց կուշուր:

— Էրեւակ չեմ տալ մինչ ու մինչ կտորուել էք, Աստուս կրակը գլխե-րուդ վեր կ'ածեմ, ասում էր Եթիմը իր ընկրտանցը:

— Ընտուր քերս հեկէլ լիւր չուիք անում, սալախանութիւն անում, ախր ես եմ ասում, թէ ինչ խաբար ա

դու միսն ասիլ շութին են արել, Դըրուտան ասէք, որ դի էք պահել, հարցրեց Նաթէլը տղերանցը:

— Ինչի, ձէն տուրեցին տղերքը:

— Լաւ, նոր ինձանից բան չէք կարող թագցնիլ, դուք ինձ ասէք կուօի աղջկանը լօլօ սվորցնիլ կլի, նրանից թագցրեց, որ ձեզ ձանաչելիս չի ըլի, ես լաւ գիտեմ թէ ամեն մինչ քանի մոխայ էք:

Վերջապէս մեր տղերքը կտորուեցին միայն այն պայմանով, որ 10 գաթայ ստանան: Գնացին բօխչէն բերին աղջկերանցը տուին, 10 գաթէն ատան և ալլահ-եօնայ, ոնց որ միտքնենուն էր գալիս էս խաղը վեր քաշեցին, Արկարն էլ իր շուն հետներուն բռնացրեց, Եթիմայի քեր էր նա...ի, Թաքօ ջան, Լիւնակն ճատեղի էր, Թաքօ ջան, Քեզ խափտով դուս կանչեցինք, Թաքօ ջան,

Բօխչէն սլքացրինք, Թաքօ ջան, էլ չի ասեւ, թէ օյեաղ եմ, Թաքօ ջան, Աղջկերանց էլայ բաչին եմ, Թաքօ ջան, Եթիմն ու Միսօն փախցրին, Թաքօ ջան, Աչքու-Հանքայ ձորումը թագցրին, Թաքօ ջան»

(Կը շարունակվի):

հայ քարոզչաց ու թաղ խորհրդոց, որ յառաջիկայ շարքի կիրառել և երկու- չարքի գիշերներն հսկում ընեն վաճառ քաղաքի և Կեն. Ս. Պատրիարք Հօր (Արևելք):

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անձնասպանութիւն. — Վերջին օրերս Իսրայիլի մէջ սրտաճմլիկ անձնասպանու- թիւն մը գործուէր է. աւասիկ մանրա- մասնութիւններն:

Աօգէֆ Մ. անուն հացագործ մը — որ թէ և ամենէն կը յարգուէր, բայց խել- քով տկար էր — իրիկուն մը սովորակա- նէն տխուր իւր սենեակը կը քաշուի, բարձրանալէ փողոց տան մը հինգերորդ յարկը, սենեակին մէջ տեղը կը ժողվէ իւր խնայողութեանց արդիւնքը, 15,000 Ֆրանք, ներկայացնել ալ և ալ արժե- քով ինչպէս բաժնեթուղթ, պանդոտն փոխանակազիր և այլն, և ապա զայնս բռնկցնելէ յետոյ, չուսնով մը առաս- տաղէն կը կախէ ինքզինքը, բայց չու- նը կը բրդի և խեղճ մարդը ծանրագէտ գետին կ'իջնայ Եղած աղմուկը լսելով սան մարդիկը կը վազեն, և կը տեսնեն զայն դետիք պառկած, խորհալով և ընդունայն ձիգեր թափելով իւր վրը կապուած չուսնը բրցնելու համար, Սա- կայն ազու ջանից չտրտիւ, թշուախին խելքը գլուխը կուզայ և կը յայտարա- րէ թէ ալ ևս բնաւ փախաք չունի անձ- նասպան լինելու և թէ կենաց հետ հաշ- տասած է:

Սակայն իւր հարստութիւնը, իւր այն քան խնայողութեանց և զրկողութեանց արդիւնքը, 41 տարեկան էր, և այնուհե- տե ապրիլ պէտք էր խեղճն, որ այս անգամ վշտի ճշմարիտ պատճառ քու- նէր, չկրցաւ հակառակ իւր խոտմանց և որոմանց համակերպիլ, և քանի՞ որ վերջը իւր դիակը կը հանէին Սէն-Մար- թէնի ջրանցէն, ուր ինքզինք նետած էր (Արևելք):

Անդուզական պատահար մը. — Փարիզի Պօտէն փողոցին մէջ, վերջին օրերս ա- ռաւօտուն պէտք մը պատահեց է, որ իւր տարօրինակութեամբ կրնայ տարե- գրոց մէջ անցնիլ:

Սպասուէի մը, տան մը պատշգամբն մեծ գորգ մը կը թոթուէր, երբ յան- կարծ հաւատարակութիւնը կորսնցնե- լով վար չիջնալու համար գորգը թող տուաւ, որ գնաց ինկաւ զլսուեն վրայ ապակիներով լի կողով մը կրող երիտա- սարդի մը վրայ, կողովը գետին զրորե- ցաւ և ապակիները կոտորեցան, մեծա- դարդը աղմուկով մը: Նոյն վայրկեան կու- քի ձի մը, որ անկէց կ'անցնէր, ե- լած աղմուկէն սարսափելով խրտչեցաւ և փախաւ գնաց Մօպէօօ փողոցին ուղ- դութեամբ, և քանի մը սալակներ տա- պալելէ յետոյ գնաց կանգ առաւ Մա- ժէնի պողոտայն, կաթնավաճառի մը խանութին առջև, քանի մը կաթնալիք ամաններ տապալելով:

Հոս կանգ չառնուր այս անհաւատա- լի պատմութիւնը. կաթնավաճառի խա- նութիւն տէրը, տիկին Մ. մանկամարդ կին մ'որ յուրեան վերջին ատուրց մէջ կը գտնուէր, այնքան բուն սրտայուզու- թիւն կրեց այդ խելագար ձին տեսնե- լով, որ կէս ժամ յետոյ աշխարհ կը բերէր երկու սիրուն երախայներ, մին մանչ և միւսն աղջիկ:

Վերջապէս, այս դէպք կը բովանդա- կի քանի մը կտորած ապակիներու, տա- պալելալ սալակներու և կաթնած կաթի մէջ, որովհետեւ բարեբաղդաբար ոչ ոք վերաւորուած է:

Այս լուրն իմանալով ամենէն աւելի զարմայողը գիտէք ով է, — սպասուէին,

որ իւր գորգը թող տալով, այս պատա- հարաց ակամայ պատճառն եղած է:

(Արևելք):

Տիքոյ Պրահէ հռչակաւոր աստղաբաշ- խը աղուէս մը տեսած պահուն կը դու- նատէր և կը դողար: Անվիտոյ Եղիսա- պէթ թագուհին եթէ մահուան անունը լաէր, կը զարհուրէր: Մեծն Պետրոս չէր կրնար կամուրջի մը վրայէն անցնիլ: Թէպէտ չատ փորձեր ըրաւ իւր այս եր- կիւղը փարատելու համար, բայց ամեն ջանքերն ապարդիւն մնացին և ոտքը կամուրջին վրայ դրած պահուն անաւոր ճիչեր կ'արձակէր:

Լորտ Պայրըն կերակրող ժամանակը: Նաւ ուրիշին աղ չէր տար, և եթէ սե- ղանին վրայ աղ տեսնէր զիպուածով ճաշարանէն դուրս կ'իջնէր:

Յուլիոս կայսրն այնքան կը վախնար որոտման ճայնէն, որ ամեն ժամանակ փոթորիկ եղած միջոցին ստորերկրեայ վայրեր կը փախչէր որոտման ճայնը չը լսելու համար:

Սարսնիացի սպարապետ մը, որ պա- տերազմի դատին վրայ մեծ յաղթու- թիւններ կը տանէր, կը զարհուրէր եթէ կատու մը տեսնէր:

(Արևելք):

Տարօրինակ վիճակալիք մը. — Մարդ մը, որ յոյժ կը սիրէ գիտնալ իրաց պատճա- արը, ուզեր է հատկանալ թէ մարդիկ ին- չու համար մօրուք կը կրին. առ այս, համբերութեամբ հարցաքննեց է բազ- մաթիւ անձեր, և աւասիկ իրենց պա- տասխաններն:

Մարդ մօրուք կը կրէ չածիլուելու հա- մար, 9 հոգու: — Հարուստ չլինելու հա- մար, 12 հոգու: — Տնտեսիւն մը ծած- կելու համար, 5 հոգի: — Անվիտոյի մը չկարծուելու համար, 2 հոգի: — Պանդո- կապետի մը ջամանելու համար, 7 հոգի:

— Որովհետեւ գինուորական ծառայու- թեան մէջ կը գտնուի, 6 հոգի: — Որով- հետեւ ինքնին յառաջ եկած է, 21 հոգի: — Որովհետեւ իւր կինը մօրուքէ կ'ա- խորթի, 28 հոգի: — Որովհետեւ գեղեցիկ սեւին սքանչացում կը պատճառէ, 65 հոգի:

Եւ հարցաքննեալ անձերէն ոչ մին պատասխանեց թէ մօրուք կը կրէր, վաճառի իւր դէպքին կը վայելէ:

(Արևելք):

Խմբադիր Պ. ՄԻՄԵՆՆԱՆՅՑ. Հրատարակիչ Հ. ԷՆՅԻԱՃՅԱՆՅՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ Հը- րաւերում է ցանկացողներին կա- պալով առնելու Նատալիա Շիոյ- եանցի Նախկին կալուածները 1) Տ ու Ն Գ ու Վ ի յ ո լ ի ն ս կ ի պրոսպեկտի և և Գ ա լ ի զ ո լ կ ի փողոցների քննում և 2) Ք Ա Ր Վ Ա Ն Ս Ա Ա Յ Բ ա ղ ն ի ն ն եր ի փողոցներում: Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Կ արե- լի է իմանալ ամեն օր բաղաբային վարչութիւնում առաւօտեան 10 ժա- մից մինչև 2-ը կէսօրից յետ: Յայ- տարարութիւնը ընդունվում են այն մասին մինչև առաջիկայ հոկտեմբե- րի 5-ը

ՀԱՄԱՁԱՅՆ 6 յօդուածի կանո- նադր. պանդոկների մասին պատգա- մաւորները պանդոկների, ուտեղենաց խանութների և իջևանատեղերի ըն-

կերութեան ու ուշ 1-ից նոյնիմե- րի պէտք է կազմեն միջին ակցիզի- բաժանուցն 1885 թուականի հա- մար, ուստի և ԹԻՖԼԻՉԻ ՔԱՂԱՔԱ- ՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ խնդրում է վերոյիշեալ հաստատութեանց տէ- րերին ու ուշ քան մինչև 1-ը նո- յեմբերի վարչութիւնից ստանալ վկայականներ վերոյիշեալ հաստա- տութիւնը բանալու համար 1885 թ. հակառակ դէպքում նոյա հետ կ'վարվեն համաձայն 18 և 35 յօդ- կանոնադր. պանդոկների մասին:

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգե- ւոր Կարանցի Հոգաբարձութեան խորհրդարանում հոկտեմբեր ամսոյ 10-ին, երեկոյն 8 ժամին կը լինի ամուսնի (առանց կրկնաձրգի) կապա- լով տալու դարանոցի պատկանալ 21 Կ ր պ ա կ ն ե ը ը տախ- տակաշէն դարանոցով որոնք զտան- վում են Ներսիսեան հին դարանոցի հանդէպ: Պայմանաթուղթը կարելի է կարգալ Հոգաբարձութեան ղի- ւանատան մէջ ամեն օր, բացի կիւ- րակէից և տօներից, առաւօտեան 10 յ 12 ժամն միջօրէի:

Վանաց մայր եկեղեցւոյ ՄԱՆ- ԿԱԿԱՆ ՊԱՐՏԱՂ տեղափոխում է ՍՈՂՈՒԱԿ Սաղաւոյ փողոցում տի- կին ԷՖէնդիանի տանը. № 56. Ըն- դունելութիւնը սկսվում է սեպտեմ- բերի 1-ից: Նոյն տեղ ընդունվում է ԳԻՇԵՐՈՒԻ աշակերտներ չափա- ւոր գնով:

Օր. Մ. Մամիկոնեան (5-4)

Ներսիսեան դարանոցի ՎԵՅԵՐՈՐԻ դաստան ԱՇԱԿԵՐՏ ընդունում է ընտանիքներում հ ա յ ե թ է ն ԴԱՍԵՐ և պատրաստում է աշակերտ- ներ մինչև երկուրդ դաստան:

Հարցնել դարանոցում՝ Արշակ Թաղեռեսանցին.

Թիֆլիզի բոլոր հայ գրավաճառ- ների մտ ծախվում է Գ.Տէր Գա- բրիէլեանցի ԸՆԴՀ. ԱՇԽԱՂԱԳՐՈՒ- ԹԵԱՆ դասազիրքն Ա. տարի գինն է երեսուն (30) կոպէկ:

(3-3)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐԱՆՈՅԻ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Գ Գ ա ս ա տ ա ն Մ Մ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Զանկանում է ամեն առարկա- ներից Գ Ա Ս Ե Ր աւանդել տը- ներում: Հասցէն. Օրբելեան երկ- րորդ փողոց. հեռապահան կա- յարանին կից՝ Մեարդեանի տուն. չորրորդ յարկ:

ՀՐԱԻԻՐՎՈՒՄ ԵՆ այն տանտէրերն, որոնք կա- մենում են քաղաքի կենդրոնում եղած տները վար- ձու տալ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԺՈՂՈՎ Ի Ն, յայտարարութիւն տալու այս մասին, մինչև ներկայ սեպտեմբերի 28-ը, ժամանակաւոր մասնա- ժողովի անդամ պ. Ա. Գ. Մամիկոնեանցին (նոտա- րական կոնտորա Երևանի Հրապարակի վերայ), որից կարելի է տեղեկանալ մանրամասնութեանց:

Մ ա մ ու լ ի տ ա կ ի ղ դ ու ը ս ե կ աւ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ Ի Պ Ե Տ Ս Ն Ո Ր Ա Վ Ա Ր Ժ Ի Յ (Ամբողջ քերականութիւն) Ե ր կ ա ս ի ր ու թ իւ ն Հ. Ղ Ո Ւ Կ Ա Ս Ե Ա Ն Յ. Գ Ի Ն Ն Է 50 Կ 0 Պ Է Կ Կուսարով գնողներին զեջուցն կը լինի. — Ծախվում է • Կենդրոնա- կան դրամաձառանոցի: 5-10

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՒՈՐ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ ԾԱԽՎՈՒՄ Է Ա Լ Ե Խ Ի Ը Տ Է Բ-Յ ա կ ո Վ Բ Ե ա ն ց ի „ՀԱՅՐԵՆԵՐԻՏՈՒԹԵԱՆ“ Զ Ե Ռ Ն Ա Ր Կ Ը. — Գ Ի Ն Ն Է 60 Կ 0 Պ Է Կ: Նկատուող կովկասի նահանգների մեծութիւն ջոյց տուող թուերի մօտ գրած մ զ ո ն բ ա ը պ է տ ք է կ ար գ ա լ վ է բ ս տ:

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՀԱՅԿՈՒՆՈՒ Բ Ա Յ Յ Ի Ի Կ Ա Յ Ծ Ե Ր Ը Վերնագրով մատնախօսութիւնը: Հրատարակութիւն Սէյնալ Ամիրանցի: Գինն է 80 կօպ. Ծախվում է Թիֆլիսում Կենդրոնա- կան և կովկասեան գրավաճառանոցներում «Մեղուի» խմբագրատա- նը և Շահվերդեանի Պապիթոնում: Բազում Շիրազեանցի խա- նութում և հրատարակչի մօտ հետեւալ հասցէով. — Баку. Се- яду Михайловичу Амриянцу. Գ ու լ մ ա ր ո Վ զ ն ո ղ ն եր ի ն Մ Ե Ս զ ի ջ լ ու մ ն կ ը լ ն ի: (20-3)

«Կովկասեան» գրքավաճառանոցի — Զ. Գրիգորեանցի հրատարակու- թեամբ Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի Յ. ՆԱԶԱՐԵԱՆԻ «ՀԱՅՈՑ ԼԵԶ. ՈՒՍՈՒՑԻՉ» Զ ո Ր Ր ո Ր ղ տ ա ր ու ա յ Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Ը. Երկրորդ տպագրութեամբ (փոփոխութիւններով) Գինն է 60 կօպ. Կուսարով գնողներին զեջուցն կը լինի:

Մամուլի տակից դուրս եկաւ. «ՔԱՂԱՎՈՒԹԻՒՆ և ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԵՑ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱ- ՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑՈՑ» Երկարութիւն Արսէն քաջ. Բ ա զ ր ա տ ու ն լ ո ղ. Ծախվում է բոլոր գրավաճառների մօտ և Ե. Մատուրեանցի լամպայի խանութում. գինն է 50 կ.: Նոյն

տեղերում ծախվում են վերոյիշեալ հեղինակի և երկու աշխատութիւն- ներն, այն է՝ «ՏԱՍՆ ՊԱՏԱՐԱԳ» գի- նըն է 25 կ. և «ՎԵՐՁԻՆ ՅՈՒՇԻԿ» գինն է 30 շօպ.: 8-10 Մի հայ երիտասարդ, որ նոր է ա- ւարտել իւր ուսման ընթացքը Ներ- դարանոցում՝ պատրաստ է կ'ը- ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԱՇԱԿԵՐՏՈՒՄ Բ ո լ լ ր հայոց ուսուցիչներին թէ ս տ ո Ր ի ն և թ լ վ ե Ր ի ն դասատուց համար: Զանկացողներին կ'աւանդէ նաև համառօտ «Հոգեբանութիւն»: «Բան- կաբարձութիւն» «Բարդական փիլի- սոփայութիւն» և «Մեթոդիկա»: Հասցէն. Ներ. ուսումնարան — Զարութիւն Մարաղեան: Կամ ուղ- ղակի Могинская улица. домъ Джаваховыхъ № 9. Арутюнь Марзянцъ.